2860

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Կաթուղիկէ ս. Աստուածածին (ս. Գէորգ) եկեղ. ծխական Հոգաբարձութեան միամեայ գործունէութեան

1913 Թ.

— ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԲԵԼԵԱԼ —

ԹԻՖԼԻՍ
Տպարան Բ. Կիլոմէ, Վելիամինովսկայա փող. № 6
1914

14420

~~2-860~~

14420

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Կաթուղիկէ ս. Աստուածածին (Մէյդանի ս. Գէորգ) եկեղեցու հոգաբարձութեան—եկեղեցու 1913 թ. տնտեսական եւ ծխական դպրոցի 1913/14 ուս. տ. ուսումնական դրութեան մասին

Հոգաբարձութեանս կազմը՝ բաղկացած հ. Աշոտ քահ. Թէմուրազեանից, իշխ. Սարգիս Արղութեան-Երկայնաբազուկից, պ. պ. Աբգար Աբուլեանից (Երէցփոխ), Աբգար Յովհաննիսեանից և վարդան Միրզոյեանից՝ ընտրուեց 1913 թ. յունիսի 16-ին կայացած ծխական ժողովում և նոյն ամսի 22-ին հաստատուելով իր պաշտօնում թեմական առաջնորդի կողմից՝ ունեցաւ իր առաջին ժողովը։ Հոգաբարձութիւնս իր առաջին ժողովներից հարկ համարեց ծանօթանալ իրեն՝ խնամքին յանձնուած եկեղեցու գոյքերի և ծխական դպրոցի ուսումնական-տնտեսական դրութեան հետ, որոնց մասին տրւում է ներկայ զեկուցումը։

I. ԵԿԵՂԵՑԻ.—Նախորդ հոգաբարձութիւնից նորընտիր կազմիս ձեռքը չանցաւ ոչ մի գրաւոր տեղեկագիր թէ եկեղեցու և թէ դպրոցի տնտեսական և վերջինիս նաև ուսումնական դրութեան մասին։ Բարեբաղդաբար նախորդ կազմից վերընտրուելով երէցփոխան պ. Աբգար Աբուլեանը, հոգաբարձութիւնս հնարաւորութիւն ունէր առաջ եկող զանազան խնդիրների մասին գոնէ բանաւոր տեղեկութիւն ստանալ երէցփոխան պ. Աբուլեանից։ Պարզուեց, որ եկեղեցին լուրջ վերանորոգութեան կարիք ունի։ Եկեղեցապատկան շէնքերը՝ թէ եկեղեցու բակի և թէ Սայեադովկայեա փողոցի՝ (մանաւանդ վերջինս) քայքայուած դրութեան մէջ էին, որի պատճառով և համեմատաբար պակաս արդիւնք էր ստացւում այդ շէնքերից։ Չը կար նախահաշիւ,

որով հոգաբարձութիւնս ղեկավարէր և կարևոր վերանորոգութիւններ կատարելով հնար լինէր եկամուտն աւելացնել։ Օգոստոսի վերջերից հոգաբարձութիւնս մի շարք ժողովներ ունեցաւ այդպիսի նախահաշիւ կազմելու նպատակով. սակայն եկաւ այն եզրակացութեան, որ առանց նախապէս ծանօթանալու եկեղեցու նախորդ տարիների ել և մտից հաշիւներին, անկարելի է նախահաշիւ կազմել, ուստի նախահաշիւի հարցը յետաձգուեց մինչև այդ հաշուեմատեանները յետ ստանալը կոնսիստորիայից. ահա այս հիման վրայ անցեալ 1913 թ. հոգաբարձութիւնս գործել է առանց ծխական ժողովից հաստատուած նախահաշիւի։ Մինչ այդ հոգաբարձութիւնս խորհրդակցութիւն է ունեցել մասնագէտ ճարտարապետների հետ եկեղեցու անհրաժեշտ վերանորոգութեան առթիւ (խոնաւութեան առաջն առնելու մասին), կազմել է այդ առթիւ նախահաշիւ, սակայն յետաձգել է դրա իրագործումը՝ նախահաշիւը ծխական ժողովից հաստատուած չը լինելու պատճառով։ Խորհրդակցութիւն է ունեցել և եկեղեցու ընդհանուր վերանորոգութեան մասին եկեղեցւոյս միաբանութեան մասնակցութեամբ, կազմել է 13 կէտից բաղկացած անհրաժեշտ նորոգութիւնների նախագիծ, որի իրագործման համար բաւական խոշոր գումար է պէտք, և որը դարձեալ վերոյիշեալ պատճառով անիրագործելի է մնացել։

Սայեադովկայա փողոցում գտնուող եկեղեցապատկան տունը քայքայուած դրութեան մէջ է և հիմնովին վերանորոգութեան կարօտ. հոգաբարձութիւնս յարմար է դատում ծախել այդ տունը և փոխարէնը գնել եկեղեցու բակին կից գտնուող Զանշեանների շէնքը։

Վերոյիշեալ անհրաժեշտ խոշոր ծախքերի համար եկեղեցին առձեռն դրամ չունէր, մինչ այդ, նա տարիները շարունակ, ունեցել է կարևոր վերաշինութիւնների համար խոշոր կարիքներ։ Բացի այդ, մեր եկեղեցին Հալաբարի Զորաբաշի ս. Գէորգ եկեղեցուն տարիներ առաջ փոխարինաբար տուած է եղել հինգհարիւր ռուբլի, որի մասին հոգաբարձութեանս ձեռքը ոչ մի գրաւոր թուղթ չէ անցել և Հոգաբարձութիւնս հիմնուելով պ. Երէցփոխանի բանաւոր տեղեկութեան վրայ՝ դիմել է կոնսիստորիա, այդ գումարը յետ ստանալու, որ և ստացել է։

Եկեղեցին չունենալով գրաւոր գործավարութիւն, գրաւոր տեղեկագրեր, որից կարելի լինէր իմանալ եկեղեցու ստանալիքների և ապառակիների մասին, ստիպուած է եղել հիմնուել երէցփոխան պ. Աբուլեանի բերանացի տեղեկութիւնների վրայ։

Գործավարութեան այդ եղանակը եկեղեցու տնտեսական դրութեան վերաբերմամբ անցեալում խոշոր չափով ազդել է և հոգաբարձութիւնս հենց առաջին օրից մտցրել է կանոնաւոր գործավարութիւն—ինչպէս նաև հերթական հոգաբարձութեան սիստեմ։

Հոգաբարձութեանս կազմը տարւայ սկզբին բաղկացած էր հետևեալ հոգուց. 1. Աշոտ քահ. Թէմուրազեան, 2. Իշխան Սարգիս Արղութեան-Երկայնաբազուկ, 3. Երեցփոխան Աբգար Աբուլեան, 4 Աբգար Յովհաննիսեան, 5. Վարդան Միրզոյեան։ Հոգաբարձութեանս անդրանիկ ժողովում նախագահ ընտրուեց Աշ. քահ. Թէմուրազեան, գանձապահ՝ պ. Աբգար Աբուլեան։ Քարտուղարութիւնը ու գործավարութիւնը յանձնուեց դպրոցիս աւագ ուսուցիչ պ. Յակ. Աղաբաբին։

Յաւօք սրտի պէտք է ասել, որ 1913 թի սեպտեմբերի 4-ից դադարել են հոգաբարձութեանս նիստերին մասնակցել Աշոտ քահ. Թէմուրազեանը՝ գրաւոր հրաժարական ներկայացնելով գերապատիւ թեմական առաջնորդին, և պ. Վարդան Միրզոյեանը նոյնպէս չէ յաճախել հոգաբարձութեանս նիստերին սեպտեմբերի 7-ից՝ քաղաքից բացակայելու պատճառով. այնպէս, որ ամբողջ տարին հոգաբարձութեանս կազմը բաղկացած է եղել երեք անդամից.—նախագահութիւն է արել հոգաբարձութեանս փոխ-նախագահ պայծ. իշխան Ս. Արղութեան-Երկայնաբազուկը։

Հոգաբարձութիւնից հրաժարւած հ. Աշոտ քահ. Թէմուրազեանի և ամբողջ տարին քաղաքից բացակայած պ. Վարդ. Միրզայեանի փոխարէն նոր հոգաբարձուներ ընտրելու վերաբերմամբ հոգաբարձութիւնս ստացել է հոգեւոր իշխանութիւնից գրաւոր հրահանգ նոր ընտրութիւն կատարելու այսօրւան ծխական ժողովում։

Եկեղեցու վերաբերմամբ պէտք է ասել, որ լինելով Թիֆլիսի հինաւուրց և յայտնի եկեղեցիներից աւագը՝ ունի թէ ծխականների ահագին բազմութիւն և թէ ջերմեռանդ ուխտաւորների ահագին թիւ, սակայն ցայսօր գտնւում է ներկայ անմխիթար վիճակի մէջ։ Ըստ երևոյթին շատերը նկատել են իր ժամանակին ս. Գէորգ եկեղեցու կարիքները և անուշադիր թողել. սակայն այսօր, այստեղ հաւաքւած ծխական յարգելի ժողովը իր կարական խօսքը պէտք է ասէ՝ մանաւանդ եկեղեցու խնամութեան դէմ առնելու մասին, որի համար նոյնիսկ հոգաբարձութիւնս յատուկ խորհրդակցութիւններ է ունեցել և նախահաշիւ պատրաստել տւել ճարտարապետի ձեռքով։

II. ԴՊՐՈՑ.—Հոգաբարձութեանս գլխաւոր հոգսերից մէկն էլ եղել է իր խնամքին յանձնւած դպրոցը։

1912/13 ուսում. տ. դպրոցը ունեցել է II և III պատրաստականներ՝ ընդամենը՝ 50 աշակերտով, որի համար ծախսել է 2198 ր. 26 կ. (ռոճիկ և այլ ծախսեր)։

Հոգաբարձութիւնս թեմական տեսուչ՝ պ. Յով. Տէր-Միրաքեանի գրաւոր դիտողութիւններից (1913 թ. յունւարի 4), տեղեկանում է դպրոցի ուսումնական վիճակի մասին։ Թեմական տեսուչը իր դիտողութիւնների մէջ առաջարկել էր ս. Գէորգի հոգաբարձութեան, որ եկող տարւանից՝ հարևան թաղում գտնւող ս. Սարգսի եկեղեցու հոգաբարձութեան հետ համաձայնութեան գալով՝ աշխատեն այդ երկու դպրոցներում ծրագրային կապ և դասարանների յաջորդականութիւն ստեղծելով ունենալ գէթ չորսամեայ դասընթացով մի կանոնաւոր դպրոց, որովհետև երեքուն և կցկտուր դասարանները, որպիսիք պահ-

ւելիս են եղել ս. Սարգսի և ս. Գէորգի դպրոցներում, ահագին ծախք են կլանում և չեն ծառայում իրենց բուն նպատակին։

Բացի թեմական տեսչից, թեմիս առաջնորդ գերապատիւ Մեսրովբ եպիսկոպոսն էլ այցելելով յիշեալ դպրոցները, նոյնպէս գտել էր թեմական տեսչի դիտողութիւնը միանգամայն նպատակայարմար, այն նկատումով, որ այդ երկու դպրոցները գտնւելով երկու միմեանց կից թաղերում հեշտութեամբ կարելի կը լինէր միմեանց յաջորդող դասարաններ պահել։

Երբ հոգաբարձութիւնս ընտրւեց, նրա առաջին նպատակն եղաւ ծանօթանալ իր խնամքին յանձնւած դպրոցի դրութեան հետ և քննութեան առնել յիշեալ երկու պաշտօնական անձանց կարիքները։ Հոգաբարձութեան խորհրդակցութիւնն (որին մասնակցում էին Աշ. ք. Թէմուրազեան, իշ. Ս. Արղութեան-Երկայնաբազուկ, Աբգ. Յովհաննիսեան և Աբգ. Աբուլեան (Միրզայեանը քաղաքից բացակայ էր) եկաւ այն եզրակացութեան, որ վերոյիշեալ երկու դպրոցների մէջ ծրագրային կապ և դասարանների յաջորդականութիւն ստեղծելը՝ ոչ միայն ՁՆԱՍԱԿԱՐ չէ ուսման գործի համար, այլ և խորապէս համոզւեց, որ կատարւող ծախքերի դիմաց՝ կանոնաւոր դպրոց ունենալն իւրաքանչիւր ծխականի սրտին մօտ կը լինի անպայման։

Ահա այս տեսակէտով, հոգաբարձութիւնս, իր ամբողջ կազմով, բանակցութեան մէջ մտաւ ս. Սարգսի դպրոցի հոգաբարձութեան հետ, որ նա ունենալով իր դպրոցը, պահէ այնպիսի դասարաններ, որոնք ս. Գէորգ դպրոցի դասարանների հետ փոխադարձ յաջորդականութիւն ու շարունակութիւն ունենան։

Յիշեալ բանակցութիւնը կատարւեց 1913 թւի յունիսի 23-ին, թեմիս ս. առաջնորդի նախագահութեամբ։ Այդ ժողովը կարծիքների փոխանակութիւնից յետոյ միաձայն որոշեց.—

1. Միացնել յիշեալ երկու դպրոցները միմեանց յաջորդող դասարաններով։

2. Այդ դպրոցներն առայժմ ունենալու են՝ Ա., Բ., Գ. և Դ. բաժանմունքներ, որոնցից երկուսը ս. Գէորգի և երկուսը՝ ս. Սարգսի գաւթում։

3. Դպրոցներն ունենալու են մի ուսուցչական խումբ, մի աւագ ուսուցչով, որոնք աւանդելու են երկու դպրոցներում եղած առարկաները։

4. Իւրաքանչիւր հոգաբարձութիւն հոգում է իր դպրոցի բաժանմունքների ծախքերը, (իբրև առանձին-առանձին եկեղեցիների հոգաբարձութիւններ), իսկ դպրոցների վերաբերեալ ընդհանուր ծախքերը բաժանում են հաւասար և հոգում են երկու հոգաբարձական կազմերը. (օրինակ՝ աւ. ուս. դպրոցական բժշկի և այն)...

Ահա այն տեսակէտները, որոնց հիման վրայ, հոգաբարձութիւնս պահելով իր խնամքին յանձնուած դպրոցն իր եկեղ. գաւթում, սահմանել է ս. Սարգսի դպրոցի հետ այնպիսի ծրագրային կապ ու դասարանների յաջորդականութիւն, որը անհրաժեշտօրէն ցանկալի էր մեր բոլոր դպրոցների համար։

Այս հիման վրայ հոգաբարձութիւնս այս 1913—1914 ուս. տ. բացել է ոչ միայն երկու բաժանմունք, ինչպէս եղել է անցեալ տարի, այլ և՝ ընդառաջ գնալով բազմաթիւ խնդրատուների ցանկութեանը, անհրաժեշտ է համարել բանալ երեք բաժանմունք։ Բանալով երեք բաժանմունք՝ հոգաբարձութիւնս ի նկատի է ունեցել հետևեալ պարզ հաշիւը։

Ինչպէս ասացինք, անցեալ 1912 — 13 ուսում. թ. ս. Գէորգի դպրոցն ունեցել է երկու բաժանմունք, ընդամենը՝ 50 աշակերտով, որի համար ծախսել է՝ 2,198 ր. 26 կ. (ռոճիկ, թեմական տեսչին և այլ ծախքեր)։ Բաժանելով 2,198 ր. 26 կ. յիսուն աշակերտի վրայ՝ մի աշակերտը դպրոցին նստել է՝ 43 ր. 96 կ.։

Ներկայ 1913—1914 ուս. թ. ս. Գէորգի դպրոցն ունի

երեք բաժանմունք և ընդամենը 130 աշակերտ, որի համար ծախսելու է մօտ 3,282 ր. 50 կ. (ռոճիկ, գրքեր, դպրոցական պիտոյքներ, դրադարան և այլն)։ Բաժանելով 3,282 ր. 50 կ. հարիւր երեսուն աշակերտի վրայ՝ մի աշակերտը դպրոցին նստել է 25 ր. 25 կ.։

Անցնող տարին այս տարւայ հետ համեմատած՝ տեսնում ենք, որ անցեալ տարում իւրաքանչիւր աշակերտի համար դպրոցը աւելորդ ծախս է ունեցել 18 ր. 71 կ.։ (43 ր. 96 կ.—25 ր. 25 կ.=18 ր. 71 կ.)։

Այս հաշուով անցեալ տարի 50 աշակերտի համար ծախսել է (50×18 ր. 71 կ.) 935 ր. 50 կոպ. աւելի։ Մի դումար, որով հենց մինչև 40 աշակերտ աւելի կարելի էր պահել, եթէ դասարանները յաջորդող և լրիւ լինեն։ Հոգաբարձութիւնս ի նկատի առնելով ահա այս հանգամանքը որոշեց սեպտեմբերից բանալ դպրոցն երեք բաժանմունքով։

Անցեալ տարի, սեպտեմբերի 7-ին, առաջնորդարանում, ս. առաջնորդի նախագահութեամբ կայացած հոգաբարձութեանս ժողովում, հոգաբարձութիւնս յայտնեց իր յիշեալ որոշումը, որն և հաւանութիւն գտաւ ս. առաջնորդի կողմից։

$19^{13}/_{14}$ ուսում. թուին հոգաբարձութիւնս ունեցել է ս. Սարգսի եկեղ. հոգաբարձութեան հետ խառն ժողովներ երկու դպրոցների մէջ ծրագրային կապ և դասարանների յաջորդականութիւն ստեղծելու մասին, նաև զբաղուել է դպրոցական ընդհանուր բնոյթ ունեցող այլ խնդիրների վերաբերմամբ։ Այդ ժողովներից մի քանիսին նախագահել է նոյն իսկ սրբազան առաջնորդը։ Խառն ժողովների համար հոգաբարձութիւնս ունեցել է հերթական նախագահութիւն։ Դպրոցներին վերաբերեալ մասնաւոր խնդիրները խորհրդակցութեան առարկայ են դարձել առանձին-առանձին հոգաբարձական ժողովներում։ Տարւայ սկզբից հոգաբարձութիւնս ունեցել է 22 առանձին նիստ և 12 հո-

դաբարձական խառը նիստեր ս. Սարգսի դպրոցի հոգաբարձութեան հետ։

Հոգաբարձութիւնս իր ոյժերը ներածին չափ աշխատել է դպրոցի ուսումնական գործը կանոնաւոր հողի վրայ դնել. ինչպէս օրինակ.—

1. Դպրոցի բոլոր աշակերտներին տարւայ սկզբից անխտիր բաժանել է դասագրքեր և ուսումնական պիտոյքներ. նոյնն արել է ամբողջ ուսումնական տարւայ ընթացքում։

2. Ձրիավարժների քանակը հասցրել է 40-ի, որը հաւանաբար դարձեալ շատանալու է։

3. Հոկտեմբեր ամսից հրաւիրել է դպրոցական բժիշկ և աշակերտներին ձրիաբար բժշկական օգնութիւն է հասցրել.—հայթայթելով նաև դեղօրայքը։

4. Աւագ-ուսուցչի ջանքերով՝ բարեգործական ճաշարաններում հնար եղածին չափ շատ աշակերտներ է զետեղել ձրիաբար ճաշելու։

5. Ծանդեան տներին մօտ 40 հոգու հագուստեղէն է բաժանել (մեծ մասամբ նուիրաբերած)։

6. Դիմել է բաղանիքների կապալառու պ. Շալամեանցին և թոյլտուութիւն է ստացել ամսական 30 աշակերտի ձրիապէս լողանալու։ Հոգաբարձութիւնս պարտք է համարում իր անհուն շնորհակալութիւնը յայտնել թէ նուիրատուներին և թէ պ. Շալամեանին։ Այժմ հոգաբարձութիւնս միջոցներ է ձեռք առնում, որ կարողանայ առաջիկայ ուսումնական տարւանից դէթ չքաւոր աշակերտներին նախաճաշիկ տալ դպրոցում։

Այսքանից յետոյ՝ հոգաբարձութիւնս հիմնւած իր միամեայ դիտողութիւնների վրայ, այլ և ի նկատի առնելով դպրոցիս աւագ-ուսուցչի տւած զեկուցումը, անհրաժեշտ է համարում ծխական ժողովիդ առաջ պարզելու այն առաւելութիւնները, որն ունեցել են մեր միացեալ երկու դպրոցներն այս տարի և ունենալու են մանաւանդ այսուհետև։

Ա.—Փաստ է, որ մեր ծխական դպրոցներում աշակերտում են չքաւոր դասակարգի երեխաներ, որոնք մեծ մասամբ հնարաւորութիւն չունենալով ուսում շարունակելու աւելի բարձր դպրոցներում,—կեանք են մտնում ուսման տարրական պաշարով։ Ահա մեր միացեալ դպրոցները հնարաւորութիւն են տալիս մեր աշակերտութեանը այսուհետև կեանք մտնել հինգ կամ վեց ամեայ կրթութիւն ստանալուց յետոյ, մանաւանդ տղաները, որոնց համար Թիֆլիսում ոչ մի ծխական դպրոց՝ նիւթական սղութեան պատճառով՝ չունի երրորդից բարձր պատրաստական։

Բ.—Միացեալ դպրոցներում ուսուցիչները հնարաւորութիւն կունենան իրենց սկսած այս կամ այն առարկան աւանդելու մինչև դպրոցի վերջին դասարանը ըստ ծրագրի և մի ամբողջացում տալ աշակերտութեանը, որի արդիւնքն այն կը լինի, որ նախ՝ աւարտող աշակերտը՝ իր կորցրած տարիքի դիմաց կը ստանայ տարրական լրիւ կրթութիւն և երկրորդ՝ որ դպրոցը, իր ծախսած գումարի դիմաց՝ աշակերտութեանը կը տայ իր ծրագրի իսկական պահանջներին համապատասխան կրթութիւն։ Այլապէս՝ զուր կանցնեն թէ աշակերտի աշխատանքը և թէ դպրոցի ծախսած գումարները։

Գ.—Միացեալ դպրոցը հնարաւորութիւն ունենալով պահելու 5—6 տարւայ դասընթացքով մի դպրոց՝ իր միանգամ ընդունած աշակերտին պահում և կրթում է իր յարկի տակ 5—6 տարի շարունակ և այսպիսով ազատում է նրան ամեն տարի այս ու այն դպրոցի դուռը բաղխելուց, երբ շատ անգամ նա բախտ չէ ունենում տեղաւորւելու մի որևէ դպրոցում ու մնում է կամ փողոցներում թափառելիս և կամ դիմում է օտար դպրոց։

Դ.—Այսպիսով միացեալ դպրոցիս վերջին դասարանն աւարտող աշակերտը հնարաւորութիւն կունենայ հեշտութեամբ տեղ գտնելու Ներսիսեան դպրոցի II և III դասարանում, աշակերտուհին Յովնանեան և կամ Գայիանեան

դպրոցի նոյն դասարաններում, իսկ ուսումը լրացնել չը ցանկացողները դպրոցը թողնելուց յետոյ իրենց հետ կը տանեն քիչ թէ շատ բաւարար ուսումն, որը կեանքի մէջ նրանց կը կարողանայ գոնէ որոշ չափով բաւարարութիւն տալ։

Ե.—Միացեալ դպրոցներն ըստ հարկին ունենալով ուսուցչական մի մեծ խումբ, մանկավարժական նիստերին դպրոցական հարցերը քննում են աւելի բազմակողմանի կերպով, որն ունի անպայման իր դրական կողմը թէ աշակերտութեան առաջադիմութեան, թէ կրթական գործի օգտակարութեան և թէ առհասարակ ուսման կանոնաւորութեանը վերաբերեալ խնդիրներում։

Զ.—Միացեալ դպրոցներն իրենց ճնայուն բաժանմունքներով՝ վստահութիւն են ներշնչում աշակերտ ունեցող ծնողների և կամ ծխականների մէջ՝ իրենց որդուն առաջին պարագայից ծխական դպրոց տալու։ Հակառակ այն սովորութեան, որ կասկածելով թէ այս ծխական դպրոցը՝ այս կամ այն դասարանը չունի, իր որդուն շրջեցնում է այլ և այլ դպրոցներ,—տեղ չը գտնելու դէպքում ճարահատեալ բերում տեղաւորում է ծխակ. դպրոցում։

Ահա այս ու այսպիսի բազմաթիւ փաստեր՝ հոգաբարձութեանս եկան աւելի դրականօրէն համոզելու, որ ամենայն իրաւամբ միացեալ դպրոցներ ունենալը միանգամայն օգտակար է և բղխում է մեր ծխական դպրոցների ծրագրի ոգուց՝ մանաւանդ այնպիսի պարագաներում, երբ՝ մի եկեղեցի հնարաւորութիւն չունի մի կանոնաւոր դրպրոց պահելու չորսից—վեցամեայ դասընթացքով։ Մեր մի տարուան փորձառութիւնը մեզ աւելի քան համոզեց հոգաբարձութեանս կատարած գործի օգտակարութիւնը՝ միացնելով ս. Սարգսի դպրոցը ս. Գէորգի դպրոցի հետ՝ դասարանների յաջորդական կապով և ծրագրային ամբողջացում ստեղծելով։

Այսօր հոգաբարձութիւնս ի նկատի ունենալով ծխական դպրոցների վերաբերեալ կանոնագրութիւնը, որով

սահմանուած են 4-ամեայ և 6-ամեայ դասընթացքով դրպրոցներ,—ցանկալի է համարում բանալ առաջիկայ ուս. տարեանից նաև Դ. բաժ. ս. Գէորգի դպրոցում, որի յաջորդական դասարանները երևի կը տեղաւորուեն ս. Սարգսում և կամ հակառակը՝ ս. Գէորգ եկ. բակում կը լինեն բարձր բաժանմունքները՝ իսկ ս. Սարգսում՝ սկզբնականները։

Այսպէս ուրեմն այժմ 4-ամեայ կանոնաւոր դպրոց ունենալու և ուսումնական գործը աւելի կանոնաւոր հիմքերի վրայ դնելու համար պարզ է, որ ծախքերը կաւելանան ու եկեղեցին իր ընթացիկ ծախքերի հետ անկարող կը լինի այդ ծախքերն էլ կատարել։

Հոգաբարձութիւնս միաբանութեանը ժողովի էր հրաւիրել խորհրդակցելու ծխական տուրք սահմանելու մասին սակայն այդ չէ յաջողուել և ահա այսօր այդ խնդիրը դնում է ծխական ժողովիդ առջև և յոյս ունի, որ դպրոցի բարգաւաճումը իւրաքանչիւր ծխականի սրտին մօտ լինելով, դրական լուծումնկը ստանայ և օր առաջ գործադրութեան դրելով՝ ս. Գէորգի ծխական դպրոցի բարգաւաճմանն էլ աւելի նպաստածկը լինի։

III. ՈՒՍՈՒՄԸ.—Աւագ-ուսուցչի 1913/14 ուս. թ. դպրոցի ուսումնական գործի մասին կազմած զեկուցագրից քաղուածօրէն առաջ ենք բերում հետևեալ տեղեկութիւնները։

Դպրոցիս նորեկ աշակերտութեան ընդունելութիւնը տևել է մինչև սեպտեմբերի 7 ը. որից պարզուել է, որ I պատ.—բաժանմունքում աշակերտելու են 43 հոգի, II պատ.—բաժան.—42 հոգի և III բաժ.—45 հոգի. ընդամենը՝ 130 աշակերտ-աշակերտուհիներ։

Սեպտեմբերի 7-ին ծխականների և ծնողների ներկայութեամբ կատարուել է դպրոցական մաղթանք։ Սեպտեմբերի 8-ից սկսուել է կանոնաւոր ուսումը։ Սեպտեմբերի 16-ից անխտիր բոլոր աշակերտութեանը բաժանուել է դասագրքեր, ուսումնական պիտոյքներ և ուսումնական գործը առաջ է տարուել իր կանոնաւոր ընթացքով։

Սեպտեմբերի 26-ին և 27-ին դպրոցս է այցելել թեմական տեսուչ Մեծարգոյ պ. Յով. Տէր-Միրաքեանը. երկու օր ներկայ է եղել բոլոր դասերին, արձանագրել է իր դիտողութիւնները և դպրոցի ուսումնական գործը գտնելով իր կանոնաւոր ընթացքի մէջ՝ յայտնել է իր խրախուսանքը։

Ուսումնական գործն իր վերոյիշեալ սկզբնաւորութիւնից յետոյ՝ ամբողջ տարին առաջ է տարել իր բնական ընթացքով։ Իւրաքանչիւր երկամսեակից յետոյ՝ նախ Մանկավարժական խմբի կողմից թէ բանաւոր և թէ գրաւոր տեղեկութիւններ է տուել թոյլ աշակերտների ծնողներին՝ հոգալու իրենց զաւակների պակասութիւնները, ապա՝ կազմակերպուել են ծնողական դասախօսութիւններ յատկապէս ընտանեկան դաստիարակութեան, ուսման առաջադիմութեան շուրջը։ Դաստիարակչական այդ զրոյցները մեծ համակրանքով են ընդունուել ներկայ եղող ծնողների բազմութեան կողմից։

Ուսման գործի յաջողութեանը նպաստել են նախ՝ դպրոցումս ընդունուած պարտադիր ընթերցանութեան սիստեմը, որ առաջ է տարուել շաբաթական 4 դասով (I բ. 2 դաս, II և III ում մէկ-մէկ դ.) երկրորդ՝ բացօթեայ դասեր, որոնք ըստ հարկին կազմակերպուել են՝ իրազննութիւնից, հայրենագիտութիւնից և բնագիտութիւնից։ Երրորդ՝ կրթական նպատակով կազմուած փոքրիկ էքսկուրսիաները, որոնք կատարուել են դէպի քաղաքիս մօտ-շրջակայքները։

Ուսման յառաջադիմութեան նպատակով Մանկավարժ. խորհուրդը տարւայ սկզբից ընդունել է ամսական պարտադիր գրաւորների սիստեմը, որը կատարուել է անխտիր բոլոր դասարաններում՝ հայոց, ռուսաց լեզուներից և թուաբանութիւնից ամեն ամիս՝ դասարանական և կամ ընտանեկան գրաւոր աշխատանքներից զատ։ Ցիշեալ գրաւորների հետևանքները գրի են առնուել Մանկ. խորհրդի արձանագրութիւններում։

Ուսումնական գործի ղեկավարն եղել է երկու դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիներից կազմուած Մանկավարժական Խորհուրդը, որը մինչև օրս ունեցել է 19 նիստ՝ նուիրուած ուսման և դաստիարակչական գործի զա-

նազան խնդիրների խորհրդակցութեան։ Մանկավարժական խորհրդի ներկայացուցիչն է եղել դպրոցիս աւագ-ուսուցիչը, որն անխտիր հսկել է երկու դպրոցները և կենդանի կապ պահպանել հոգաբարձական մարմինների հետ։

Աւագ-ուսուցիչը ունենալով շաբաթական 16 դաս, օրական դասաւանդել է 2—3 դաս։ Ազատ մնացած օրւայ երկու ժամերին նա՝ նախ լսել է պաշտօնակից ուսուցիչ-ուսուցչուհիների դասերը, ապա հսկել է, որի կատար՝ ածուեն Մանկավարժ. Խորհրդի որոշումները և երրորդ ընթացք է տուել հոգաբարձութեան այս կամ այն կարգադրութիւնները։

Ուսման գործի յաջողութեանը պակաս զարկ չէ տուել աշակերտների ընթերցանութիւնը։ Տարւայ ընթացքում դպրոցի II և III բաժանմունքի աշակերտները՝ նախ յաբմարութիւն են ստացել օգտուելու Բարեգործականի և Էժանագին գրադարաններից, երկրորդ՝ կանոնաւորելով դպրոցիս մանկական գրադարանը, այնուհետև ընթերցանութեան գրքեր են տուել դպրոցի գրադարանից։

Տարւայ ընթացքում ուսման գործի յաջողութեանը որոշ չափով խոչընդոտ են հանդիսացել նախ՝ դասարանների վառարանների և ապա դասարանական իրերի անյարմարութիւնները, երրորդ՝ կաթուղիկէ ս. Աստուածածին եկեղեցու (ս. Գէորգի) տօները, երբ 4—5 օրով դասարանները դատարկուում են և ուխտաւորներին վարձով տրւում։

Այս տարի, մինչև օրս դպրոցումս եղել է 3 աշակերտական հանդէս, մէկ աշակերտական ներկայացում և մի քանի աշակերտական զբօսանքներ։

Անդամք Հոգաբարձութեան
- ԻՇԽ. Ս. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ
- Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
- Ա. ԱԲՈՒԼԵԱՆՑ

Քարտուղար՝ ՅԱԿ. ԱՂԱԲԱԲ

1914 թիւ, ապրիլի 24-ին Թիֆլիս

	ՄՈՒՏՔ	Ռ.	Կ.
1	Մնացորդ առ 1-ն յունուարի 1913 թ. կանխ. դրամով	246	55
2	Մնացորդ առ 1-ն յունուարի 1913 թ. մոմ.	117	75
3	Վաճառած մոմ	3988	87
4	Կիսայրեալ »	551	59
5	Ընթացիկ հաշիւ Թիֆլ. II Փոխ. Վարկ. ընկ.	821	50
6	Вкладъ № 38 և 342	1300	—
7	Տոկոսներ	76	47
8	Զրի վաճառումից	20	—
9	Նէբներ	120	—
10	Մատաղի մորթիք	116	20
11	Բնակարանների վարձ	1734	93
12	Տաբլա	240	80
13	Լուսագին	474	55
14	Եկեղեցական տուփ	23	86
15	Թոշակ աշակ. 19¹²/₁₃ ուս. տ. 200 ր.		
16	» » 19¹³/₁₄ » » 305,50	505	50
	Գումար	10338	57

ԾԱՆՕԹ.—Մնացորդ առ 1-ն յունուարի ս. թ.

1	Вкладъ № 342 (5¹/₄%)	1000
2	» № 38 (3%)	300
3	Ընթացիկ հաշիւ 3¹/₂%	500
4	» » № 638 3¹/₂%	221.50
5	Խաղարկ. տոմս. կուպոններով № 93—119.	
6	(գանուում է վիճակ. կոնսիստ. անդ. № 120	

	ԵԼՔ		Ռ.	Կ.
1	Թեմ. տեսչին ռոճ. 19¹²/₁₃ ուս. տ.		28	14
2	Գործակալին 1913 թ.		40	—
3	Մոմ գնուած		1964	69
4	Գնահատ. տուրք 1910—12 թ.	175.49		
5	» » 1913 թ.	96.12	271	61
6	Զեմսկի նալոգ 1912 թ.	23.44		
7	» » 1913 թ.	25.17	48	61
8	Պետական տուրք		45	17
9	Զուր		77	32
10	Նորոգութիւններ		681	95
11	Ընթացիկ հաշիւ		1100	—
12	Вкладъ		2000	—
13	Ապահովագրական կրակից		27	37
14	» տոմսի խաղարկ.		27	35
15	Լուսաւորութիւն և վառելիք		67	99
16	Մանր ծաքերը		148	54
17	Անակնկալ 19¹²/₁₃ հոգ. քարտ. Բերինեանին		60	—
18	» տիրացու Գիրգիրեանին		90	—
19	Շարժական գոյք		9	96
20	Ռոճիկ ծառայողներին		1029	50
21	Ռոճիկ ուսուց. 19¹²/₁₃ ուս. տ.	1560.—		
22	Մանր ծախք 19¹²/₁₃ ուս. տ.	29.58		
23	Ռոճիկ 19¹³/₁₄ ուս. տ.	960.—		
24	» բժիշկի	25.—		
25	Մանր	87.21	2361	79
			10079	99

ԾԱՆՕԹ.—Առ 1-ն յունուարի 1914 թ.

1	Вкладъ № 460	2000.—
2	Ընթացիկ հաշիւ	1000.—
3	Մնացորդ մոմով և դրամով	265.10
		3265.10

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL014954